

ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-5/ և առաջին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-1/ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթներ անցկացնելու մասին

27.08.2020

Տիպ՝ [Համայնքային ծառայության թափուր պաշտոններ](#)

Հայտատու՝ Մուսալեռի համայնքապետարան

Համայնքային ծառայության մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-5/ և առաջին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-1/ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-5/

ա) կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները ժամանակին պատշաճ որակով.

բ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հարկային և ոչ հարկային եկամուտների տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքները.

գ) ապահովում է իր կողմից սպասարկվող տեխնիկայի բնականոն և անխափան աշխատանքները.

դ) պատասխանատվություն է կրում համակարգչային մուտքագրմամբ գյուղապետարանից ելքագրվող ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնիության ապահովման համար.

ե) հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին

զ) աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում իր լիազորությունների սահմաններում.

է) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.

ը) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատակազմի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

թ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով այլ լիազորություններ

ժ) իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ սահմանված խնամակալության և հոգաբարձության մարմինների գործառույթները:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է.

ա) Միջնակարգ կրթություն,

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, [Համայնքային ծառայության մասին](#),

[Տեղական ինքնակառավարման մասին](#), [Նորմատիվ իրավական ակտերի մասին](#), [Հանրային](#)

ծառայության մասին, Գույքահարկի մասին, Զրոյի հարկի մասին և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, տիրապետում է, անհրաժեշտ տեղեկատվության:

Մրցույթը կկայանա 2020 թվականի սեպտեմբերի 28-ին, ժամը 1200-ին՝ Մուսալեռի համայնքապետարանի շենքում:

2. 33 Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (Ծածկագիր 3.2-1)

- ա) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է զորակոչի, զորահավաքների, ուսումնավարժական հավաքների իրականացման աշխատանքներին,
- բ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը,
- գ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը,
- դ) հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին:

Աշխատակազմի առաջին կարգի մասնագետն ունի պաշտոնի անձնագրով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է.

- ա) Առնվազն միջնակարգ կրթություն
- բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, ԶՀամայնքային ծառայության մասին, Տեղական ինքնակառավարման մասին, Երրորդ ակտերի մասին, ԶԻնապարտության մասին, ԶՀանրային ծառայության մասին և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- գ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն: Մրցույթը կկայանա 2020 թվականի սեպտեմբերի 28-ին, ժամը 1400-ին՝ Մուսալեռի համայնքապետարանի շենքում:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 13.09.2020 թվականի ժամը 18 00-ն:

Դիմող 33 քաղաքացիները Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմ կամ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

-Դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/ -տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակների հետ միասին.

-հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում 33 կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.

-հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ

սահմանափակ գործունակ.

-արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները.

-մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

-անձնագրի պատճեն:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարան / Շառլ-Տիրան Թեթեյան 2/1, հեռ 0231 6 47 22/ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն /հասցե՝ ք. Արմավիր, Խ. Աբովյան 71, հեռ 0237 2 07 70, 0237 2 76 49/:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10.00-ից 16.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2020 թվականի սեպտեմբերի 13-ը:

Հեռ.՝ 0231 6 47 22

Էլ. փոստ՝ musaler.armavir@mta.gov.am

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Մուսալեռ, Շառլ-Տիրան Թեթեյան 2/1

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարան, Շառլ-Տիրան Թեթեյան 2/1

Հեռ.՝ +374 231 64722

Էլ. փոստ՝ musaler.armavir@mta.gov.a